ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Պ-1350-30.04.2026-ՏՏԳԾ-011/0) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Պ-1350-30.04.2026-ՏՏԳԾ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բուսասանիտարիայի մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-140-Ն օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետերով.

«39) սննդատարր՝ քիմիական տարր, որն անհրաժեշտ է բույսերի աճի ու զարգացման համար, և որի պարունակությունը ագրոքիմիկատի մեջ ապահովում է դրա սնուցող հատկությունները՝ կախված տարրի քանակությունից դասակարգվելով որպես մակրոտարր, մեզոտարր կամ միկրոտարր.

40) ագրոքիմիկատի բաղադրիչ նյութ՝ ագրոքիմիկատի բաղադրության մեջ մտնող քիմիական նյութ կամ խառնուրդ, որն օգտագործվում է որպես լրացուցիչ բաղադրամաս պատրաստուկային ձևի ստացման համար կամ հանդիսանում է հումքի բնական խառնուրդ, և որն ինքնին չի հանդիսանում սննդատարր, սակայն ազդում է արտադրանքի ֆիզիկաքիմիական հատկությունների վրա.

41) շրջանառություն՝ պեստիցիդների կամ ագրոքիմիկատների ներմուծում, արտահանում, պահպանում, փոխադրում, իրացում (այդ թվում՝ վաճառք, մատակարարում կամ ցանկացած այլ ձևով փոխանցում), ինչպես նաև օգտագործում (կիրառում):»:

Հոդված ~~1.~~ 2 Օրենքի 5-րդ հոդվածի 1-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 3.1-ին կետով.

~~«3.1) Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների կամ դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի եւ ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի արգելման ու շրջանառությունից հանելու կարգի սահմանումը.»:~~

«3.1) Կառավարության սահմանած կարգին համապատասխան՝ հանրային առողջության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով արգելված պեստիցիդների կամ դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի և ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի ցանկի հաստատումը.»:

Հոդված ~~2~~***3.*** Օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

~~«1) պեստիցիդը կամ դրա ազդող նյութը, համագործիչ կամ օժանդակ նյութերից որեւէ մեկը արգելված են Հայաստանի Հանրապետությունում.»:~~

«1) պեստիցիդը կամ դրա ազդող նյութը, համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը ներառված են Հայաստանի Հանրապետությունում արգելված պեստիցիդների կամ դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի և ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի ցանկում.»:

Հոդված ~~3~~***.4*** Օրենքի 6.1.-ին հոդվածի՝

1) 6-րդ մասի 1-ին կետում «շեղումները,» բառից եւ կետադրական նշանից հետո լրացնել «բաղադրիչ նյութերը,» բառերով եւ կետադրական նշանով.

2)6-րդ մասի 3-րդ կետում «քանակը,» բառից հետո լրացնել «(տվյալների առկայության դեպքում)» բառերով եւ կետադրական նշաններով.

3) 9-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

~~«1) ագրոքիմիկատի սննդատարրերից որեւէ մեկը արգելված է Հայաստանի Հանրապետությունում».~~

«1) ագրոքիմիկատը կամ դրա բաղադրիչ նյութերից որևէ մեկը ներառված են Հայաստանի Հանրապետությունում արգելված պեստիցիդների կամ դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի և ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի ցանկում.»:

Հոդված ~~4~~5. Օրենքի 6.2.-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

~~«3) պեստիցիդը կամ դրա ազդող նյութը, համագործիչ կամ օժանդակ նյութերից որեւէ մեկը, ինչպես նաեւ ագրոքիմիկատը կամ դրա բաղադրիչ նյութերից որեւէ մեկը արգելված են Հայաստանի Հանրապետությունում.»~~

«3) պեստիցիդը կամ դրա ազդող նյութը, համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը, ինչպես նաև ագրոքիմիկատը կամ դրա բաղադրիչ նյութերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետությունում արգելված պեստիցիդների կամ

դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի և ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի ցանկում.»:

Հոդված ~~5~~6. ~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2.Սույն օրենքի ~~1-ին~~2-րդ հոդվածով նախատեսված՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին կետից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: